

ՄՈՒՐԱԿ-ԲԱՓԱՅԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԿՈՐ ՓԱՓԱՋՅԱՆ

1985 թ. հունիս ամսին (ուղիղ 250 տարի անց այն օրից, երբ Նղվարդի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում իրանական զորքերը Նադիրկուլի խանի ղեկավարությամբ ջախջախիչ պարտության մատնեցին օսմանյան զորաբանակներին), ՀՍՍՀ Նաիրիի շրջանի Նոր Արտամեստ գյուղի մոտի Մուրադ-Քափա բլրի գագաթին կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում գտնվել են մարմարի վրա փորագրված թուրքերեն չափածո մի արձանագրության բեկորներ¹:

Նղվարդի ճակատամարտի նկարագրությունը բովանդակող պատմական տեղեկությունները հավաստում են, որ այդ բլրի գագաթին է հաստատված եղել Նադիրկուլի խանի հրամանատարական կենտրոնը, որտեղից նա հետևել է ճակատամարտի ընթացքին և ղեկավարել մարտը²: Բլուրը մինչ այդ, Ախթ-յանղի գյուղի անունով կոչվել է Ախի-Քափա³: Հաղթանակից հետո միայն, ի նշանավորումն այդ մեծ հաջողության, Նադիրի կողմից այն վերանվանվել է Մուրադ-Քափա, որ կարելի է թարգմանել «Յանկալի բլուր»³:

Մանրամասն նկարագրելով ճակատամարտի ընթացքն ու ավարտը, Աբ-բահամ կաթողիկոս Կրետացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ճակատամարտից երկու ամիս հետո Նադիրի՝ վերստին կովի վայրը գալու, կաթողիկոսի և Նրևանի ավագանու հետ միասին բլրի գագաթը բարձրանալու և այնտեղ այդ հաղթանակը նշանավորող հուշարձան կառուցելու վերաբերյալ կաթողիկոսին կարգադրություններ անելու մասին. «Նույրժամ եկն մեծաբաղդ խանս մերձ այսմ բլրիս,— կարդում ենք գրքի 16-րդ գլխում,— էի և ես ընդ նմա, քանզի խնդրեալ էր զիս: Նույն առաւօտուն, երբ կամէր շուել, ել ի բլուրն այն, կոշեաց և զիս ընդ մեծամեծս՝ խաներօք և միրգօք հանդերձ, զքեալան-թարն և զմելիքն ևս, ի գագաթ՝ բլրին ի տեղին, որում հարեալ էր զվրանն իւր յաւուր պատերազմի, յորում զյաղթութիւն արար: Նույնտ երկար խօսեցաւ ընդ

¹ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի բաժնի վարիչ Ա. Քալանթարյանի հետ յոդերիս գրողը եղավ նշված վայրում: Պարզվեց, որ հայտնաբերված քարաբեկորներն արդեն փոխադրված են շինվարության՝ Նոր Գեղիում գտնվող գրասենյակը, իսկ բլրի գագաթն արդեն հարթեցված էր և քարերի հայտնաբերման վայրում շինության որևէ մնացորդներ չկային: Վային միայն սև և կարմիր տուֆի մշակման ընթացքում գոյացած փշրանքների մնացորդներ, որոնք կարող էին վկայել տեղում երբևէ կատարված կառուցողական աշխատանքների մասին: Չկար մշակված քարի թեկուզ և մի բեկոր, իսկ եթե հատուկնետ կտորներ եղել են էլ, թերևս մեքենաները զննել էին և թաղել հարթեցված հողի տակ: Սակայն շինարարները պնդում էին, որ բոլոր տեսակի են միայն այս մարմարե բեկորները և ուշագրությամբ հավաքել ու փոխադրել են գրասենյակ:

² Абраам Кретацк, Повествование, изд. Н. К. Корганян, Ереван, 1973, հայերեն ընդգրկ. էջ 56, 63, (այսուհետև՝ Կրետացի), محمد کاظم-نامہ جهان آرای میرزا محمد نادرى، مسکو، ۱۹۶۶، جلد ۱، ص ۶۲۱ (այսուհետև՝ Մուհամադ-Քյադիմ), مهدی خان استرآبادی-تاریخ نادرى، تبریز، ۱۳۷۸، ص ۸۸ (այսուհետև՝ Աստարաբադի):

³ Հայտ Մուհամադ-Քյադիմի նաև՝ Ղարաթափա (տե՛ս Մուհամադ-Քյադիմ, էջ 608):

⁴ Կրետացին նախապես նշում է, որ բլուրը վերանվանվել է Մուրադ-Քափա— «Սուրբ բլուր» (Կրետացի, էջ 63), սակայն մի այլ տեղ անվանում է Մուրադ-Քափա (նույն տեղում, էջ 61):

մեզ... վասն գմբեթին, որում հրամայեաց շինել օրինակ վրանին իւրոյ, զի մնացէ յիշատակ և յիշեսցին ապագայիցն»⁴:

Որեւէ այլ աղբյուրում Աբրահամ կաթողիկոսի այս տեղեկութիւնները հաստատող վկայութիւններ չեն հանդիպում: Նաղիրի երկու պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմն ու Միրզա Մուհամադ-Մեհդի խանը, որոնք տալիս են դեպքերի մանրամասն նկարագրութիւնը, թեև խոսում են Մելիք Նզանի գլխավորութեամբ հայկական զինված ուժերի՝ մեր պատմութեան համար բախտորոշ այս ճակատամարտին մասնակցելու և հատկապես Աշտարակի և շրջակա գյուղերի հայ զինվորական՝ օսմանյան զորքերի նահանջի ճամփան փակելու, թիկունքից կործանել հարված հասցնելու և շախախիչ պարտութեան մատնելու մասին⁵, սակայն Նաղիրի՝ Կարս կատարած արշավանքից առաջ, կրկին Մուրադ-Քափա պցելելու և հուշարձանի շինութեան վերաբերյալ կարգադրութիւն անելու մասին ոչինչ չեն հաղորդում: Մինչդեռ Կրետացին հաջորդ՝ 17-րդ գլխավոր տալիս է նաև հուշարձանի կառուցման մանրամասն նկարագրութիւնը. «Եւ ապա փութացուցաք զգործաւորս ամարաթին (շինութիւն), զոր պատուիրեաց խանն շինել ի գլուխ բլրին ի տեղի վրանին իւրոյ: Եւ յանձնեաց ինձ և մէլիք Մկրտումին, ի վերակացու լիցուք, և մեր գիտութեամբն ծախքն լիցի: Եւ կամ ի կողմանէ իմմէ գիտուն մարդ մի դիցեմ, զի և նա վերակացու լիցի ի վերա վարպետաց և շինուածոց: Այլ և Բ (2) մոհթէմէտ (վերակացու), զոր նոքա սարգեար անուանեն, զի գրեսցեն նոքա և զխարճն և օգնութիւն արասցեն վերակացուացն՝ կրել տալու զքարն և զկիրն ի գիւղորէից: Որ և ես իմոյ կողմանէ եդի զՂալաճի-օղլու Ստեփանոս վարդապետն Արդումցի, որ էր ընդ մէլիք Մկրտումին ի բլուրն այն ի վերա շինուածոցն և աշխատեցաւ անդ ի (20) ատուրն՝ մինչև ցաւարտումն նորին»⁶: Սրան հետևում է արդեն ավարտված կառուցքի արտաքին նկարագրութիւնը, որն օգնում է դասավորելու հայտնաբերված բեկորները, վերականգնելու արձանագրութեան նախնական ձևը և պատկերացնելու մոտավոր ծավալը: Եւ կատարեցաւ զշինուածն, զի էր վրանաձև, գմբեթաձև, և ի ներքոյ խորափիտ. եւ ի տեղի ժողովելոյ ջուրց, զոր ի անձրեզայր ի վերնոտէ այնմ բլրին հորդեալ ճանապարհաւ ինչ և ժողովէր այնմ խորափտի սարընձաձև, յորում վերա կայր շինուածն: Եւ յորժամ լնանի տակերդն, ելեալ ի ճանապարհէ խողովականման և հոսի զառ ի վայր ի ձորն»⁷:

Ինչպես տեսանք, սույն նկարագրութիւնը վերաբերում է միայն կառուցքի ձևին և շինարարական այն առանձնահատկութիւններին, որոնք պիտի հուշարձանն անվնաս պահեն տեղումներից և անձրեալներից առաջացող ավերումներից: Ասված է նաև, որ շինութեան համար քար և կիր է փոխադրվել բլրի գագաթը: Ուրեմն կառուցքը քարաշեն է եղել, իսկ այն հանգամանքը, որ ոչինչ չի ասված մարմարե արձանագրութեան մասին, թույլ է տալիս ենթադրելու, որ այն արվել է ավելի ուշ, համեմայն դեպս՝ ոչ անմիջապես շինարարութեան ընթացքում:

Գտնված 13 մեծ ու փոքր բեկորների կոտրվածքների և եզրերի համադրման շնորհիվ հնարավոր եղավ մոտավոր ճշգրտութեամբ պատկերացնել արձանագրութեան ընդհանուր տեսքը, որն, ինչպես երևում է, կազմված է եղել տարբեր շափերի հինգ հղկված մարմարե սալերից, որոնք հարթեցված եզրերով միացած են եղել իրար, ստեղծելով իրոք «վրանաձև գմբեթահարկ» (2,5X1,6 մ) հարթ մակերես, որի վրա գծագրվել են նախշերով երկված 42 համաչափ վանդակներ և որոնցից յուրաքանչյուրի մեջ բարձրաքանդակ փորագրված է մասնավորի հանգով գրված շափածո արձանագրութեան մեկ երկտող (բեյթ): Չի փորագրված միայն ներքևի ձախ անկյան վերջին վանդակը: Ուստի լրիվ փո-


⁴ Նույն տեղում, էջ 63:

⁵ Մուհամադ-Քյազիմ, էջ 633: Աստարաբադի, էջ 88, հմմտ. «Հայ ժողովրդի պատմութիւն», հ. IV, Երևան, 1972, էջ 181—184:

⁶ Կրետացի, էջ 65—66:

⁷ Նույն տեղում, էջ 66:


րազմված վանդակների թիվը ընդամենը 41 է եղել: Դրանցից լրիվ անվնաս մեզ է հասել 14-ը, մասամբ թերի՝ 3-ը, 4 վանդակի միայն ձախակողմյան փոքր մասն է պահպանված (կարդացվում են երկտողերի վերջին հանգավոր բառերը), 1 վանդակի՝ աջակողմյան կեսը, իսկ երկու վանդակից՝ մեկական բառ:



Արձանագրության գտնված բեկորները:

Այսպիսով՝ արձանագրության ամբողջ տեքստից բացակայում են 17 լրիվ երկտող և 10 երկտողի՝ մեծ կամ փոքր մասը: Մեր ձեռքի տակ եղածը, փաստորեն, բնագրի կեսն է, իսկ եթե նկատի ունենանք, որ թերի երկտողերը մեծ մասամբ անհասկանալի են, ուրեմն եղածը բնագրի 40 տոկոսից ավել չէ: Արձա-

նազրույթյան վերևի գմբեթաձև մասի ձախակողմյան կամարաձև բեկորի վրայի
 بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ (հոգևորականի կողմից գրված է հղել
 անունը) և քանի որ գմբեթաձև մասի



աշակողմյան ավելի մեծ հատվածը չի պահպանվել, ուստի բացակայում են 1, 4, 7 և 10-րդ երկտողերը, իսկ 2, 5, 8 և 11-րդ երկտողերից, ինչպես վերը նշվեց,

մնացել են միայն յուրաքանչյուր տողի վերջին հանգավոր բառերը: Եթե արձանագրության վերին գմբեթածե հատվածից պահպանվել է միայն ձախակողմյան փոքր մասը, ապա ներքևի վրանածե մասից՝ միայն աջակողմյան փոքր մասը և ձախակողմյանից՝ միայն երկու և կես երկտող պարունակող երկու բեկոր:

Այսպիսին է վերևի աջ անկյունից մինչև ներքևի ձախ անկյունը 41 վանգակից պահպանված լրիվ և թերի երկտողերի վերծանված թուրքերեն բնագրի թարգմանությունը: Երկտողերը համարակալված են ըստ վանդակների հերթականության, որով պարզ է դառնում, թե ո՞ր երկտողերն են բացակայում և բնագրի որ մասն է մեզ հասել:

2. սրբությունը,
- տերությունը:
3. Երբ հաղողություն շնորհեց հավերժ կենդանին,
- Այս վայրում պարտվեց օսմանյան զորքը,
5. անի,
- հավաքի:
6. Զափից ավելի հպարտ էր իրենով,
- Համարում էր իրեն անպարտելի,
8. իմ զորքն է,
- ինձ հավասար է,
9. Իմ կեռ թրի շողշողուն փայլից,
- վախեցած շարունակ սարսափի մեջ էր:
11. , իմ սուպատակը,
- ինձ ընդառաջող,
12. Իմ ահը Սպահանը սարսափեցրեց
- Հակառակորդը պարտվեց իմ առջև,
13. Երբ խորասանն է մտքում նրա,
- Հոգսը պատում է նիշաբարին:
14. Ազերբայջանի կողմը նվաճեցի,
- Թավրիզում էի, Երևանը գրավեցի,
18. Զորքը բռնեց այս սարերն ու քարերը:
- Կռիվն ընկավ այս կողմերը,
19. Ժամանակի տիեզերահռչակ տնօրենը,
- Ողջ Իրանի ընդհանուր հրամանատարը,
23. Դա աշխարհի տիրոջ հրամանն էր,
- Այդ հին հիմքերը նա նորից ամրացրեց,
24. Բշնամու հույսերը տակն ու վրա արեց,
- Եվ թողեց նրան ողբ ու կոծի մեջ,
28. Իր ճերմակ դեմքը նա հողին հպեց,
- Հիշելով ամենակարողին և ողորմածին:
29. Վեր կացավ ասեց զորքը հավաքվի,
- Հրամայեց որ շեփորները հնչեն
32. . . . իմացականության աշխարհի հրեշտակը
- ները ստույգ հրամայեց:
33. Արագավազ [ձի]երն են դուրս քաշել,
- արեգակն է փայլում արևելքում:
34. Երբ դյուցազներ հեծավ նժույգին,
- Փառաբանությունները բարձրացան երկինք,
36.
- Հարյուր և
37. Արձանագրիր այս պարտությունը, օսմանցին ջարդվեց:
- Ենիշերիբաշին դուրս եկավ հիմա:
38. [վեր]ցրեց
- րորդը:
39. Երբ աստված նրան ձեռք մեկնեց,

Օսմանցիներին պարտության մատնեց:

41. Ռանակն այս դիպվածում

Օսմանցոց սարսաքյարը

Բավական անարվեստ այս շափածո ներբողյանում, որի սկզբի մասը գրված է առաջին դեմքով, խոսքը տալով նադիրին, պատմելու՝ սուլյն ճակատամարտին նախորդած իր վերելքն ու հաղթանակները հորասանից մինչև Սպահան՝ ու Ազերբայջան, նկարագրված է «ողջ Իրանի հրամանատարի»՝ ճակատամարտին նախապատրաստվելը, անձամբ ցուցաբերած քաջությունը, «աստծո օգնությամբ» ձեռք բերած հաղթանակն ու օսմանյան զորքերի ջախջախիչ պարտությունը:

Ինչպես ասվեց, արձանագրության վերջին՝ 42-րդ վանդակը դատարկ է թողնված: Նկատված է, սակայն, որ նման շափածո արձանագրությունների վերջին երկտողը հատկացվում է թվականի հիշատակմանը, որ սովորաբար տրվում էր որևէ իմաստավորված խոսքի տառերի, «աբջադի» հաշվով, թվական համարժեքների գումարով: Այսպես օրինակ ելաթում գտնվող շափածո վիմագիր արձանագրություններից մեկում հիշք. 972 (1565) թվականը արտահայտված է *أبد الحى* (հավետ կենդանի) խոսքով, իսկ մի այլ նման արձանագրության մեջ հիշք. 1006 (1597—98) թվականը՝ *قضى الدين* (կրոնի իրավարար) խոսքով⁸: Նույն ձևով են հիշված նաև Մակվի և Ղտրսի բերդերի ավերման կամ նորոգման թվականները նույնանման պարսկերեն կամ թուրքերեն արձանագրություններում⁹, ինչպես նաև՝ Վանի պարսպի «Ոստանի դուռ» (Ոստան կափուսի) կոչվող դարբասի հիշք. 1177 (1763) թ. շափածո արձանագրության մեջ¹⁰:

Պետք է ենթադրել, որ Մուրադ-Յափայի արձանագրության հեղինակը դժվարացել է կազմել համապատասխան իմաստալից խոսք, որի տառերի թվական համարժեքների գումարը լինի 1148 (ճակատամարտի թվականը հիշրենթով): Դա, անշուշտ, ավելի երկար ժամանակ պահանջող դժվարին մի գործ էր, որ հետաձգվելով, այդպես էլ գլուխ չի եկել, թերևս հեղինակի մահվան կամ քաղաքական կյանքում տեղի ունեցող հեղաշրջիչ իրադարձությունների հետևանքով:

Արձանագրության կերտումը յուրովի դժվարությունների հետ էր կապվում. անհրաժեշտ էր գտնել համապատասխան շափի մարմար, որ մեծ մասամբ բերվում էր Թավրիզից: Այն պետք էր մշակել, հղկել և պատրաստել հուշարձանի ձևին համապատասխան մակերես, անհրաժեշտ էր հանձնարարել շարադրելու ներբողը և, ինչպես պարզ երևում է լուսանկարից, նախագծել համապատասխան զարդարուն վանդակներ ու դրանց մեջ փորագրել ամբողջ բնագիրը: Պարզ է, ուրեմն, որ գործին մասնակցել են մարմարը հղկող վարպետներ, ապա՝ թուրքալեզու մի ներբողագիր, գեղագիր, որը գեղեցիկ նասթաալիզ գրությամբ յուրաքանչյուր վանդակում համաչափ գրել է մեկ երկտող և վերջապես՝ մի փորագրող վարպետ, որը բարձրաքանդակ փորագրեր և՛ զարդավանդակները, և՛ 41 երկտողը:

Հավանաբար փորագրությունը կատարվել է հայ վարպետի ձեռքով. արձանագրության ներքևի լայն լուսանցքում բարձր արվեստով փորագրված է հայերեն մեծատառ «Ա», որը, ամենայն հավանականությամբ, փորագրիչի անվան սկզբնատառը պետք է լինի: Այդ մասում փորագրությունը այնքան վար-

⁸ şerif Apturrahim, Ahlat Kılbelari, Istanbul, 1932, S. 95, 96; W. Bachmen, Kirchen und Moschen in Armenien und Kurdistan, Leipzig, 1913, S. 67—69.

⁹ В. Мигорский, Древности Маку, путевые заметки, Петроград, 1916, с. 12.

¹⁰ ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի (ենիդգրադի բաժանմունքի ֆոտոարխիվ, Q-324, 31 (neg. III—1046):

պետորեն է կատարված, որ նման չէ այլ տեղերում հանդիպող պատահական այցելուների թողած ստորագրություններին ու հիշատակագրություններին։ Առհասարակ արձանագրության պահպանված լուսանցքներում նման հիշատակագրություններ չկան։ Պարզ երևում է, որ այն փորագրված է արձանագրության հետ միաժամանակ, համաչափ ուղղահայաց դիրքով։ Քանի որ տառը աչակողմյան ստորին հատվածի ներքևի լուսանցքի սկզբնամասում է, կարելի է ասել, որ փորագրողը նպատակ է ունեցել շարունակել և լրիվ գրել իր անունը, սակայն ինչ-ինչ պատճառներով կիսատ է թողել։

Արձանագրության բեկորների հայտնաբերումը ոչ միայն հաստատում է Արրահամ Կրետացու վկայությունները 1735 թ. Նադիրի հրամանով Մուրադ-Քափա վերանվանված բլրի գագաթին, ի նշանավորումն ձեռք բերած հաղթանակի, իր վրանի տեղում քարաշեն հուշարձանի կառուցման մասին, այլև վերջնականապես ճշգրտում է այն տարածքը, որտեղ տեղի է ունեցել ճակատամարտը։

Պարսիկ պատմարանները ավելի հավաստի ու արժեքավոր են համարում ճակատամարտի նախապատրաստմանը, ընթացքին և հաղթական ավարտին վերաբերող Արրահամ Կրետացու պարզ ու որոշակի նկարագրությունները, քան պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմի և Միրզա-Մուհամադ-Մեհդիի բազում էջեր զբաղեցնող ծանրաշունչ և ներբողագրությամբ խճողված ընդարձակ գլուխները։

«Սև սկսալ այնուհետև տեսանել զպատրաստութիւն իւր վասն պատերազմի,— գրում է Կրետացին,— ...և ընտրեաց իւր տեղի բանակի և վրանի զբլուր մի բարձրավանդակ, որ ի հնուց անուանեալ էր Ախի-թէփէսի, և անդ հարեալ զվրանն, ամրացոյց զբոլորն բլրին այն, քարէ կարկառի... եւ ի շաբաթ օրն եհաս և Քօրբուլու-օղլին զօրօք իւրովք, և յԱպարանու վերի կողմէն էջ ի ստորոտն Արայի լեռան՝ յանդիման Եղուարդու, եւ ելեալ շարխաճիքն (առաջապահ զօրք) ընդդէմ միմեանց դիպան և անկեալ երկուց կողմանց սակաւ դիակուք ի բաց կացին ի միմեանց, իսկ զգիշերն ամենայն աշխատեցան պարսիկքն վասն շրոյն պակասութեանն... զի հեռի էր գետն Զանկի, իբրև ձիու արշաւանս և (2) յետուստ կողմանէ, և առաջի նոցա զօրքն թուրքաց»¹¹։

Երբ կանգնում ենք բլրի գագաթին, դեմքով դեպի Արայի լեռը և մտաբերում Կրետացու՝ ճակատամարտի ընթացքին և ավարտին վերաբերող տողերը, պարզ է դառնում, թե ինչպես է (իր գլխավոր ուժերը թաքցնելով բլրից մինչև Հրազդանի կիրճը ընկած տարածքում) Նադիրը խաբել Արգուլլա փաշային, որը, տասնապատիկ զերազանց ուժերի վրա վստահ, հրամայել է իր բանակին՝ իջնել Արայի լեռան նպաստավոր դիրքերից և Եղվարդի դաշտով հարձակում գործելով, պարտության մատնել հակառակորդին։ Տեսնելով իրանական երեք փոքրաթիվ զնդերը, օսմանյան հեծելազորի բարձրաստիճան հրամանատարներից մեկը գոչել է. «Ինչ պիտի լինին պարսիկք, զի առ ոտս հեծելազորացն իմոց տամ առաթուր կոխել զնոսա»¹²։

«Իսկ ի խմբել պատերազմին,— շարունակում է Կրետացին,— որովհետև վասն ռակալութեան պարսից զօրաց պատրեցան օսմանցիքն և հեռացան ի ստորոտէ լեռան Արայի և դիմեցին ի վերա պարսից զօրացն, և սոցա խոյօ տուեալ սակաւ-սակաւ հեռացուցին ի լեռնոտէ անտի և ածին մինչև Եղարդայ դաշտն։ Ապա ելեալ ի ձորոց ի կողմանցն Երևանու զօրք պարսից, որպէս ասեն թուօք ԺՀՆ (18000)–աց, և թէպէտ այնքան էին և գունդ-գունդ կազմեալք, բայց հայէին ի հեռաստանէ և ոչ պատերազմէին, զի ոչ ունէին հրաման ի խանէն, այլ միայն Գ (3) գունդն հազարական արամբ։ Այն, որ կարգեաց խանն, նոքա պատերազմէին։ Իսկ խանն ըստ արիական սովորութեանն իւրոյ կազմէր, յօրինէր, էարգէր, յորդորէր և զիւր հրահանելիքն յաշմէ և յահեկէ և ի մէջտեղաց տեղաւորէր...։ Սև խմբեցան ընդ միմեանս ճակատ առ ճակատ և ընդ թֆանկսն

¹¹ Կրետացի, էջ 56—57։

¹² Կրետացի, էջ 58, հիմնադր. Մուհամադ-Քյազիմ, էջ 608։

զմիմեանս յաղթահարէին հետեակք ի յերկուց կողմանցն: Յունիսի Ը (8) օրն կիրակի, սկսեալ ի երորդ ժամէ առօրն մինչև ցհինգերորդ ժամն հրօք և հրահանելօք պատերազմեցան: Օսմանցիքն R (2) կամ Գ (3) թօփ միայն կարացին ձգել, իսկ պարսից կողմն՝ թուի թէ 3 (300) և այլ աւելի թօփ ձգեցին և զամպարակներն զամենայն և ձեռաց թֆանկներն՝ բաղում:

Եւ հանկարծակի խանն հասաւ ի թօփխանային (արտիլերիա) օսմանցւոց և տիրեաց: Եւ յորժամ տեսին և լուան զտիրելն թօփխանային, առժամայն ի լիախուտ դարձան օսմանցիքն, և պարսիկքն՝ զկնի կոտորելով, կոտորելով հասուցին զմի ծայրն ի վերի կողմն Արայի լեռն՝ հանդէպ Սաղմոսավանից՝ և զվարի ծայրն զօրաց՝ ի կողմն Աշաարակու և ի միջի եղեալսն՝ դէմ ածին Քարսահ գետոյն ի դիմաց Յոհանավանից և Կարբու և Մօզնու: Որ և թուի թէ բազումք էին զահալիժեալքն ի ձորն Քարսահ գետոյն, քան թէ սրով սպանեալքն¹³:

Բոլոր սկզբնաղբյուրները միաբերան հաստատում են Կրետացու այս համոռոտ, սակայն ստույգ նկարագրութիւնը: Իրողութիւնն այն է, որ իրանական հրետանու կրակային հզորութիւնը, հեծելազորի շեշտակի ճակատային հարվածներն ու թուրքական հրետանու հանկարծակի գրավումը թշնամու բանակի խորքը մխրճված ջեզայիրչիների կողմից, լիովին կազմալուծել են թուրքական զորքերի մարտական կարգը, որին և հաջորդել է անկանոն ու խուճապահար նահանջը:

Ինչպես տեսանք, միօրյա այս ճակատամարտը տեղի է ունեցել Հրազդան գետից ոչ շատ հեռու գտնվող Մուրադ-Քափայից մինչև Արայի լեռը ընկած տարածքում և օսմանցիների ջախջախիչ պարտությամբ ու հրամանատար Արդուլա փաշայի սպանությամբ ավարտվել է Քասախի կիրճում:

НОВОВЫЯВЛЕННАЯ ТУРЕЦКАЯ НАДПИСЬ НА ХОЛМЕ МУРАД-ТАПА

АКОП ПАПАЗЯН

Резюме

Летом 1985 г. при проведении земельных работ на вершине холма Мурад-тапа, близ села Нор Артамет Наирийского района Армянской ССР были найдены обломки мраморной плиты с турецкой надписью, составленной в стихотворной форме. Эта надпись была составлена в ознаменование победы Надир-шаха над турками 21 июля 1735 г., т. е. ровно за 250 лет до находки.

Упоминание о сооружении памятника на вершине холма в честь победы имеется в «Повествовании» Абраама Кретади. Сопоставление сведений Абраама Кретади с сохранившимися фрагментами надписи дает возможность восстановить общий вид памятника и определить количество строк в тексте. Текст надписи состоял из 41 довольно неискусного бейта панегирического содержания. Бейты составлены в форме маснави. В нашем распоряжении имеется только 14 полных и 10 неполных бейтов.

Обнаружение фрагментов надписи не только подтверждает сообщение Абраама Кретади о сооружении памятника «в виде шатра» на вершине холма, на том месте, где находился шатер Надира, но и одновременно, окончательно устанавливает место, где происходило сражение.